

ՈՍԿԵՂԵՆ ՄԵԾ ՈՒՌԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

«Տօ՛ն Կարողիկէ Արքայ էջմիածնի», կ'ըն-
չե՛ն հետվեն մելանուշ նվագը Կաթողիկէ դան-
գակատան: Կարձաղանքն ան մեր ականջնե-
րուն, հյուսված ու զաշնավորված՝ անդա-
դրում թրթռումներովը դարերուն և գետ օդին
մեջ ժուռ եկող ծիծղածավալ ալիքներովը
հետզհետե մարմրող դիլ կոշերուն՝ երբեմնի
երկաթյա կամ փայտեղեն ժամահարին:—
«Օրհնյա՛լ է Աստված...».— պատասխաներ է
սրտարուխ մրմունջը շրթներուն հայ հավա-
տավորին՝ երկնահայաց խաչակնքումովը
կուրծքին: Հայ շրթները՝ շարժած հայ հոգիին,
որ կցոլանա պրիսմակին մեջն իր բյուրեղ-
յա հավատքին: Ինքն ալ շունչն է Աստուծո,
էենդանի բոցովը Սիրո Հուրին՝ հոգացված,
սերունդն սերունդ, ջերմիկ եռանդովը ավան-
դական բարեպաշտության: Աստվածաշունչ և
աստվածատուր է ան:

Ահա՛ տեսիլը, վերանորոգված, — տարիկ
տարի՞, — ո՛չ, այլ ժամանակի անընդհատ և
անկշռելի բայերուն հետ — «լուսակերպ»,
«բարձր և անեղ ՄԱՐԻ»-ուն, «Ոսկեղեն Մեծ
Ուր» իր ձևերին մեջ: Եվ իր վայրէջքը, —
«սլացնալ, խոյացնալ, բոտ նմանութեան ա-
րագաթն արծուոյ»: «Եւ լոյս հոսեալ վերուստ
ի վայր միեշէ յերկիր հասանէր, և ընդ լու-
սոյն՝ զօրք անշափք և երկթևեանք՝ ի տեսիլ
մարդկան, և թեր իրրն զհուր»:



Ապա Տեսիլը մյուս մարդուն, «ի զարման
հաւեալ — հսկող — և արքուն»: Տգիտության
խավարի ետը վիրապին մեջ նետված և ապա
դուրս ելած անկե՛ն՝ աստվածգիտության
լույսով ջահավոր: «Մատխո՛ճ՝ Մարդը, որ
կտեսնէ, պայծառ ու հստակ, հոգվո աշերով,
հանկարծամաս հանդիպումը Աստվածու-

րյան ողորմության անհին սմանելիքնե-
րուն», «երկնային այցելություն մը՝ նորա-
տունի հայուն:

ԵՐԿՈՒ ՏԵՍԻԼՆԵՐ — «արքուն բնությամբ
Աբարիչ»-ին՝ ՄԻԱՍԻՆՆԻ և արքանուն արա-
ւածին՝ Պարեւածին՝ ԳՐԻԳՈՐԻՆ —, աստվա-
ծայինը և մարդկայինը, իրերախառնված և
շաղահյուսված, հավետ անբաժանելի միու-
թյամբ:

Եվ վարը, «Սանդարամետը անդունդնե-
րուն», թե Սպանդարամետը հնարույր
«սրբության և իմաստության»: Խավար
ողիտության կամ ստվերը «անգիտության»
երկրպագու «Անձանք Աստուծույն»: Կիշնե
հարվածը Ոսկեուրին՝ լաճատարած թանձր
գետին: Կհնչե՛ն «մեծ ու անշափ զորությունը»
օրհասական «մոլորության» ոգին կամ Աս-
տուծմէ հիմարեցուցված «աշխարհի իմաս-
տության» ոգին: Եվ ո՞վ պիտի կարողանար
դիմանալ այդ բանդող, բայց նույն ատեն
հրաշակերտող ուժեղ «բախշում»-ին՝ Ոսկե-
ծույլ Ուռն բխած: Զէ՛ որ Միածնի աստ-
վածային «զորության» է այն, այդ Ուր
սրանշխարհործ: Զորությունը Հրաշափառ և
միշտ բարեխնամող Աստուծույն, որ՝ հառաչ-
գիտությամբ հայոց փրկությունը կսկզբնա-
վորե, պարեակալ մեղապարտ ազգեն Լու-
սավորիչ շնորհելով մեզի» (Շարահան):

Կսարսի հիմեն մեհյանը «հին աստված-
ներուն», Լուսին և Հուրին՝ աղոտ ոգեղինա-
ցումով մը միայն, և կկանգնի Տաճարը՝ նոր,
բայց ավելի քան հին աստվածները «հինա-
վուրց» Աստուծույն, որուն մեջ պայծառորեն
ոգեղինացած և խորհրդապաշտորեն ծխա-
կանացած ու կենսագործված են անոնք —
այդ Ոսկին, այդ Լուսը և այդ Հուրը, — և որ
«հոգվով և համարտությամբ «երկրպագու-
թյան» միակ առարկան է դարձած և հայուն:

Անոր, որ Արարիչն է տիեզերքին իր բոլոր գեղեցկություններով: Անոր, որ Կյանքն իսկ է, իր թաքուն և հայտնի, ժամանակավոր ու հավիտենական սքանչելիքներով: Անոր, որ ԽՈՒՆԻՐԻՆ Ե ՆՈՐՇՈՒՐԻՆԵՆՈՒՆ, — «Խորհուրդ մեծ և սխալելի» իր վերջին հայտնություններն ալ, որով «ԱՆՄԱՆՈՒԼ» կծանոթանար աշխարհին՝ իր պատկերովն ըման:

Կիչն և հարվածը Ոսկեուտին ու մշուշներով, — սուտն ու կեղծիքը, մոլորանքն ու տարտամությունը, շփոթն ու տարակույսը, և կհայտնվի Լույսը՝ իր ամբողջական ճառագայթումովը: — Ճշմարիտն ու իրականը, ուղիղն ու պայծառությունը, վստահն ու հաստատը, իրենց տեսլալին խորհրդավորությամբ:

Նրկնքի «Խորանաշեն հարկ»-ին տակ կբարձրանա, «հարք հավասար դաշտած և հատակած» երկրի վրա, «ԼՈՒՅՍԻ ԽՈՒՆԻՐԻՆ» լուսավորչակերտ: Արարատյան դաշտի սրտին վրա կարողիկեացած՝ տաճարաձև: Սիրտը հայ-քրիստոնյա հավատացյալին, Հայ Տաճարը տեսլագեղ և խորհրդագրած: Ինք իսկ «Տաճար Աստուծոյ կենդանուր»:



ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՄԻՆ, — Անոր «Սյունի խաբախը ոսկի է, սյունը՝ հրեղեն, լուսավալը՝ ամպեղեն և անոր վրայի խաչը՝ լուսեղեն»: Վասնզի այդ խաբախը՝ ՎԵՄՆ է հաստատուն և անշարժ, սյունը՝ ԿԱԹՈՂԻԿԵ ՆԿԵՂՆՅՈՒՆ, որ իր թևերուն տակ կհավաքե հավատքի միաբանությամբ՝ լուսությունը ժողովրդին: Թակադակը՝ հանգստարանը հավիտենական բոլոր արդարներուն համար:

Այսպես է Տեսիլը մեր Կուսակցության: Այսպես է, այսպես պարտի ըլլալ հավիտ Հայ եկեղեցվո լուսավորչածին բոլոր հարազատ դավաններուն:



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՄԻՆ, — քար առ քար շահախմբած ու շինված և Շահաբասներու իսկ ականածանք ներշնչած՝ նյութեղենը, և սիրտ առ սիրտ ընդերուզված և հորինված և ամենուն պատակառանք ազդած հոգեղենը: Սիրտեր՝ ատելություն ժահրեն պարզված և սիրով առցված, մոլորանքի խավարին խավերեն թոթափված և լույսի ճաճանչներով ողողված: Որով և հավիտենական Տեսիլը հայուն, անեղծ սիրով և անպղտոր լույսով ծիածանված և հավատքի հուրով բոցավառված:

Կա՝ միշտ ՈՍԿԵՆՈՒՐ, մեծ, տարածուն, անսահման, կտակված հայ հավատացյալին, — քանդելու համար ձեռակերտ և անշուշ

կուտքերը բոլոր հին աստվածներուն, և քանդակելու, խոր ու բարձր, անեղծ պատկերը նոր ու հինավուրց Աստուծո ՄԻԱՄԻՆ, Ողովուն: Քանդակելու խոստուն քարերով, — «Կենդանի վեներ»-ովը հայուն գիտակից ու անսասան հավատքին:

Եվ ահա՝ տիպար խորհրդապատկերը այդ պարզ, շնորհալի, վեհ ու պատկառելի քանդակվածին, — ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՄԻՆԸ ԿԱԹՈՂԻԿԵ: Ան կա ու կմնա, նյութեղեն կառուցվածքին հետ ոգեղենը: Անադարտ, անձեռնմխելի: Մեկ ՈՒ ԱՆՐԱՄԱՆՆԻԼ:

Վասնզի Միածնի ձեռակերտն է ան՝ իր Ոսկեուտով, իր անպարտելի զորությամբ: Եվ իր մարմինն իսկ է ան՝ ամխոցելի, անհերձելի, աներկիթելի: Որ և է ապիրատ մատի անմեղմանալի և անհպելի: Մի՝ մոռնաք, որ ԼՈՒՅՍԻ ԽՈՒՆԻՐԻՆ է ան:

Ավելի քան ՏԱՄԱՆՎԵՅ ԴԱՐՆԻՆ ի վեր կանգուն է ան. կուրծք տված բազմապիսի փոթորիկներու, մրրիկներու և ամեն կողմի կատաղորեն խուժող ու խորտակվող հորձանաժիգ ալիքներու: Տեղափոխված երբեմն, բայց ոչ հիմնախիլ եղած: Հոն է մնացել միշտ ԼՈՒՍԱՐԵՎԵՆԻԼ՝ Տեսիլն բովանդակ ճշմարտությամբն ու թուլություններ: Զի հոգին է իր զորությունը, որ պահպանած է նաև իր մարմինը: Ոչ սովորական մարմինի պես միս և ոսկոր, շիղ և արյուն ենթակա փտության և քայքայման, այլ նման Հաբուցյալ Միածնի «փառավոր մարմին»-ին, անտարբալուն և անապական: Իրերահաջորդ սերունդներ, որչափ ալ «Երե օր մ'երբեք հոր հովիվ հոր հոտ Պաշտամունքի հոր ձեռով գան քեզ մոտ (ՕՇԱԿԱՆԻ)», ու իրենց համար նոր Աստված մ'ուզեն», — «Իրի երազեն արթննալու հրավիրված Օշականի «Շական»-ին առաջ արթուն մնացող առաջին հսկային հսկումին տակ, այդ սերունդները, կըսենք, կպահեն դայն ՄՇՏԱՆՈՐՈՒԳ՝ նույն հոգիով, նույն բովանդակությամբ և հավերժության վավերական դրոշմով:

ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՄԻՆ, — Ան է և կմնա անշրջելի և անպակաս բովանդակությամբ Հայաստանայայց եկեղեցվո:

Եվ այս եկեղեցին ալիքի քան՝ ԱՌԱՔՆԻԱԿԱՆ է, Ս. Էջմիածնով գլխավորված բացառապես. վասնզի ՔՐԻՍՏՈՍՍԿԱՆ է, Միածնի տեսլալին մարմնովը ոգեղինացած ու լուսակերպված: Եվ այս, այնքան իրական, որքան մարմինը Հաբուցյալին «անհավատ» առաքյալն շոշափված ու հավատացված: Եվ հայը եղած է միշտ հավատարիմ իր անհիշելի ՎԵՄ-ՀԱՎԱՍՔԻՆ և իր հավատքի ՄՇՏԱՆ-ԼՈՒՍԱՐԵՎԵՆԻՆ, իր «ՍՐՐՈՒԹՅԱՆՆՆՍՐՐՈՒԹՅՈՒՆ»-ին:

Բարձրասլաց վերաբարձումով Կաթողիկեն է առն մեր, անաստան երկրի վրա, բայց մասնավանդ ամբանդելին՝ մեր մեջ, խորհրդին և ամբակուռ յուրաքանչյուր հայ հավատացյալի հոգվումն մեջ:

Հայրապետներ, հայ հավատացյալներու լրտվյան և քնդհանրական ձայնով ընտրված, Ս. Գրիգոր Լուսավորչին մինչև Ս. Սահակ Պարթև, Ս. Հովսեփ Հոգոցիմցիին մինչև Ս. Ներսես Շնորհալի և Գրիգոր Մուսաբեկյան, Կիրակոս Վիրապեցիին մինչև Գեվորգ Զ, — թե իսկ մերթ աստանդական և պանդուխտ, — անբաժան պահեցին տեսչական մարմինն անոր, կամարակալված միշտ Հեղինե սյունին հետ, նախախնամությամբ բարձրացած «ԱՆՇԱՐԺ ՎԵՄ»-ին վրա՝ Ս. Էջմիածնի ճարտարապետական կառուցումով: Խաչակնիք դադարիով Կաթողիկեն Ս. Էջմիածնի:

Եվ ասոր հրավառ ներշնչումն էր, որ պատուցուց 130-րդ Հայրապետը՝ Ս. Վազգեն և Կաթողիկոս Ամենայն Հայոց, որ որ այցելեցին: Իդրո է Անոր վերադրել հանձնարարված այլ առաքելություն, քան զոր Սրբալույս Մեռոնի օծումը և հայրապետական սպիտակափառ քողը կթևադրեին Իրեն: Ս. Հոգին էր Իրեն առաջնորդ և ոչ հոգին՝ «այս աշխարհ»-ին: Չեղծել այդ սրբությունը, շնորհով, որ հայհույլի անկե բխող բարին, և արծարծել սիրո հուրը հանդեպ հայուն հոգեւոր մոր, հավատքի Միածնակերտ վառարանին՝ Ս. Էջմիածնի — ահա Իր իսկական առաքելությունը:

Հայր գիտցած է, գիտե և պիտի գիտնա հավետ ՏԱԼ ԿԱՅԱՐԻՆ՝ ԻՆՉ ՈՐ ԿԱՅԱՐԻՆ՝ Է ԵՎ ՏԱԼ ԱՍՏՈՒԾՈՒ՝ ԻՆՉ ՈՐ ԱՍՏՈՒԾՈՒՅՆ Է: Այս՝ իր դարավոր և անխախտ հավատքն ու դավանանքը, իր կրոնական վարքագիծը: Ո՛վ կարող է բաժնել մեզ այս հավատքին կամ շեղեցնել մեզ այս շինակի զծեն, և այս հավատքի ժայռին վրա հիմնված հանուր Ս. Էջմիածնեն: Ունինք մեր հայերու հաստատվկայությունը, — «Յայսմ հաւատոց գմեղ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրելուակի և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն գինչ և եւ դառն հարուածք»: Եվ «Եթէ սովին հաւատովք քողուս, — կգոչեն անոնք Հազկերտին, — ոչ յերկրի այլ տէր փոխանակեմք քնդ քնդ և ոչ յերկինս այլ Աստուած փոխանակեմք քնդ Յիսուսի Քրիստոսի»:

Հին և հիւնցած չէ այս վկայությունը՝ իր կատարյալ լրջության շեշտով, հանդեպ բոլոր անոնց՝ որոնք կփորձեն Աստվածը սպանել և «նոր աստված» մը տալ մեզի: Կարթնցնենք ՉՍԿՈՂԸ՝ իր Տեսիլեն և Օշականի ՉՍԿԱՆ՝ «Գիրի երազեն...»:

Ոչ մեկ հավակնություն, ոչ մեկ ամբարտաւանություն, ոչ մեկ կեղծպարիշտ նախանձախնդրություն, ոչ մեկ սուփեստություն, և մանավանդ ոչ մեկ կողմնակի նկատում ու հետին միտք, որ օտար եղած ըլլա հայ Նկեղեցվո կոչումին և ոգվումն, — կարող են բաժնել հայ հավատացյալը անոր ԿԱԹՈՒՎԻԿՈՒԹՅԱՆ — Ընդհանրականության — վրա բեկոված անբակակի միութենեն, անոր արբանյակներուն առլով՝ հավասարազորության, անշատողականության և բացարձակ անկախության խրոխտ կեցվածքը:

Ժամանակի պահանջներն թևադրված, փոխանցման շրջանի որպէս կարգադրություն ապակեդրոնացումի երբեմնի շատագոյությունը բարուրանք և կցկցուն պատառոնելով՝ արդարացնել նկրտի վերահիշյալ մտամոլորանքները, — առնվազն բարեմտություն չէ: Հրամայական պահանջներու առջև ողջադատությամբ և ողին շղոհելու նախանձախնդրությամբ եղած ակամա և ժամանակավոր նահանջներն ու զիջումները՝ չեն փոխել կամ վտանգել հիմնականը:

Ո՛վ պիտի կամենար կամ կարենար ուրանալ, թե Ս. ԷԶՄԻԱԾԻՆՆ Է ՄԱՅՐ ԱԹՈՒՄԱՄԵՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՉԱՄԱՐ, թե իսկ Աթոռակալը, պայմաններու անդիմադրելի հարկադրանքին տակ, տեղ փոխած ըլլա առժամաբար: Այսպիսի տեղափոխություններ եղեր են դարերու ընթացքին, առանց անավազութեան ստորաստիճանին իշեցնելու Աթոռը իր սեփական վայրին և դադարափարին մեջ: Դիմենք մինչև Աղթմար, մինչև Անի և Սյամ լեռ, մինչև Հոռմկա և Սիս, — հիշած ըլլալու համար դիմադրները, — Հայ Նկեղեցվո պետերը ԱՄԵՆԱՅՆ ՉԱՅՈՑ ՉԱՅՐԱՊԵՏՆԵՐ Էին: Եվ 1441 թվականն սկսած մինչև այսօր շարունակեցին մնալ այնպէս՝ Միածնաէջ Սրբավայրին մեջ:

Մուսաբեկյանի պարագան թող շնորհեցնեն ոչ ճշմարտախոյզ խորհուրդներն առաջնորդված հոգիները: Նա Ամենայն Հայոց Կաթողիկոս էր մինչև 1441. անկից անդին ուղիղ գիծը կշարունակվի օրինավորապես Վիրապեցիով, համաձայնությամբ նույնինքն Մուսաբեկյանի: Եվ Վիրապեցիին այժմու հաջորդն է Ս. Ս. Վազգեն Ա: Ոչ Աղթմար, որ դադրած է հիմակ, ոչ ալ Սիս, որուն Աթոռը փոխադրված է Անթիլիաս, չեն կարող երբեք զուգահեռապես Մ. Էջմիածնի և անտրդարանալի հավակնություններ սնուցանել:

Գիտենք և կզնահատենք ներկայիս շեշտված կարևորությունը Անթիլիասի մեջ նստող Հայրապետին, երբ նկատի ռեննանք մանավանդ կարկառուն դեմքերը հավերժահիշատակ ՍԱՀԱԿ — ԲԱՐԿԵՆ — ԳԱՐԵԳՐՆԻ. բայց

ներքի շենք գտնե՞ր թնալ, որ նա փորձե՞ն «եղ-
ջուր ածել» գլուխ հանդիսանալու՝ իր հարա-
զատ գլուխն ունեցող ՄԻԱԿ ՄԱՐՄԻՆ-ին, որ
ՄԱՅՐ ԱԹՈՒՆ է Ամենայն Հայոց Հայրապե-
տության:

Ոչ որ այս համաստ գրիշին կարող է վերա-
գրել դիմափոխություն, հակասություն, ուրա-
ցում, և տակավին ուրիշ շատ շքնաղ ստեղ-
ծարանություններով մոլորանքներ: Անտա-
րակույս որ անխալալականության մենա-
շնորհյալներեն շենք: Բայց մենք տեր ենք մեր
երեկի և այսօրվա տեսություններուն և տե-
սակետներուն, զորս պարզած ենք մեր իսկ՝
թե՛ ծածկանուն ստորագրություններով:
Աստու՜ր— անգամ մըն ալ կերկնենք— ար-
դյունքն են եղած ժամանակի պայմաններուն
և պահանջներուն նկատմամբ: Ո՞ր պա-
տասխանատու անձ ալլապես շարժած է եր-
բեք և կարող է շարժիլ, առանց անխուսա-
փելի վտանգներու և կորուստներու ենթարկ-
վելու: Վկա՞ մոտավոր անցյալը:

Այլ է դիմափոխություն, և այլ է պատշա-
նեցում ժամանակի հրամայական պահանջ-
ներուն, և այս, ձևակերպել և առանց էու-
րյունը կամ ոգին զոհելու:

Թող կարդան, ուշադրությամբ, անկողմ-
նակալությամբ և որե՛է նախապաշարումի
զերծ «Ընծայեցի»-ին ալ «ՎԵՄ» հանգեսի
1937 ապրիլ—հունիս թիվին մեջ հրատա-
րակված «Ե՛նչպես կարելի է պահել Հայ եկե-
ղեցու միասնականությունը» հոդվածը: Եվ
պիտի գտնեն հոն հետևողականությունը
նույն տեսության և մտահոգության,— ժա-
մանակավոր պատշանեցում անցողակի պա-
հանջներուն: Ասիկա չհասկնալ՝ ոչ թե տգի-
տության կամ անգիտության, այլ ոչ բա-
րեմտության, չրսելու համար փոխ առնված
բառով մը «Բիմախնդրության» վերագրելի է
միայն: Իմաստությունը թող տա իր մեհիոր:

Եվ երբ այսօր տարբեր կտեսներ մենք
պարագաները, շրջված, որոշ շափով, դեպի
լավն ու բաղձալին,— ի՞նչ խղճով— եթե
ավելորդ չէ վերջինը փնտրել— «դիմափո-
խություն» կարելի է որակել մեր այժմու
կեցվածքը, երբ դեպի Մայր Աթոռ դարձած է
մեր դեմքը, մեր հավատքի ՆՈՒՍԱԿԵՏ-ին
սեևոված է մեր նայվածքը կարոտալի:

Եվ ասիկա պատճառ մը չէ, որ այլ Աթոռ-
ներ— հայրապետական, պատրիարքական
թե՛ առաջնորդական— չպահեն, իրենց իրա-
վասությանը որոշ ծիրին մեջ, իրենց անկա-
խությունը՝ վերաբերմամբ վարչական-մա-
տակարարական գործերու կամ գործառնու-
թյանց— ինչու է խաղալ բառերով— Հայ
եկեղեցիով ոգվույն և տեղական պայմաննե-

րուն համաձայն խմբագրված ուրույն կանո-
նադրություններով:

Կահիրեի մեջ գումարված նպիսկոպոսա-
կան ժողովի որոշումները և խմբագրել առա-
ջագրված ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ ՍԱՀ-
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, հաստատ հիմերու
վրա դնելու համար ԵԿԵՂԵՑՎՈ ՀՈԳԵՎՈՐ
ՄԻՈՒԹՅՈՒՆԸ կամ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,
ուրիշ կերպ թարգմանել և խեղաթյուրել՝ գործ
չէ ոչ ողջմտության, ոչ բարեխղճության:
«Կուսակցական խեղի» է այս, ինչու՞ չե՞մ
պաշտպանե՞ր Զարեմ սրբազանը: Նամա-
կագրի մը խոսքերն են ասոնք, ինչպես
կըշնջեն հեռվին մեր ականջին: Շշուռք կամ
անշշուռք, այս է զժրախտաբար մերկ իրա-
կանությունը:

Դարձյալ, մենք ոչ թե մեր եկեղեցիով ժո-
ղովրդապետական-միավորական ոգին, այլ
դայն եղծող կուսակցապետական-անջատո-
ղական ոգին է, որ կուղենք արմատախիլ
ընել: Եկեղեցին ժողովրդինն է, և ժողովրդին
համար է և ժողովրդով: Ինքն իսկ ժողովուրդն
է ոգեղինացած՝ իր եկեղանի հավատով, իր
հաւաքատ Բրիտանությունամբ, ասոր խոր-
հուրդներու դավանությամբ և կիրառությամբ:
Բայց ոչ երբեք կողմ մը կամ կուսակցություն
մըն է ան, և մանավանդ քաղաքական բնույթ
ունեցող և հավասար դատարկացած: «Գի՛նչ
միաբանություն է Քրիստոսի բնդ Բեկառայ,
կամ զի՛նչ բաժին կալ հաւատացելոյն բնդ
անհաւատին»:

Առաքյալի այս խիստ դատաստանեն զուրս
չի մնար որե՛է անաստվածյան հոգի: Այլ է
կեսարը, այլ է Աստված,— յուրաքանչյու-
րին իր արժան տուրքը: Եվ եկեղեցին՝ ՏՈՒՆ
է ԱՍՏՈՒԾՈՒ, եկեղեցին՝ ՄԱՐՄԻՆ է ՔՐԻՍ-
ՏՈՍԻ:

Ինչ վայրի մեջ և ինչպիսի կառավարական
վարչաձևի տակ իր գոյությունը պահպանե-
լու հարկին մեջ կգտնվի եկեղեցին,— ոչինչ
պիտի դո՛հ իր ժառանգություններեն և
ավանդություններեն, որոնք կապ ունին զուտ
կրոնական համոզումներուն հետ և ոչնչով
կարգիլին և կհրամայեն իսկ կատարելու
ամենայն հավատարմությամբ քաղաքացիա-
կան բոլոր պարտականությունները: Անկրոն
կամ ապակրոն եղած բլլա երկրի մը վարչա-
ձևը, բավական է որ չըլլա կրոնական հա-
լածանք և ցույց տրվի հանդուրժող ոգի,
ժողովուրդը, որպես նույն երկրին քաղաքա-
ցին, պիտի չթերանա իր պարտականությանց
մեջ: Բայց պիտի չըն իր կրոնական համո-
զումները և պիտի չդեղնի պաշտպանելու և
պահելու զանոնք ամեն գեղով: Պատմությու-
նը վկա: Վկա նաև հոգին, որուն զորու-

թրամբը— Ոսկե մուրճովը— խորաքանդակած է իր հավատքը:

Կշեռաներ աշտեղ դարձյալ պատշանկցումը ժամանակի պահանջումներուն:

Կրսենք ասիկա՝ անվարան և անվախ, առանց ծուռ մտածումներու: Իսկ «Բինախընդուրյո՛ւն» — այդ շատ հեռու է մեզմէ: Այդ կանգրդատնա անոնց վրա միայն, որոնք կերակայեն զայն մեր մէջ: Ունինք վկայութիւնը ճշմարտութեան, որ հայտնի է բոլոր աննախապաշար և ողջադատ մտերու: Կա նաև վկայութիւնը մեր բոլոր հրապարակային թի մտերմական պրոբլեմներուն: Նույնիսկ շատերուն անոնցմէ, որոնք աշտը չեն խղճահարիւր այս վերադրումն բնկու մեզի:

Ժամանակը կվարձատրե և կպատժե իր զավակները՝ համաձայն իրենց դորձերուն և ոչ թի իրենց խոսքերուն: Բայ է հրապարակը ամենուն առջև. սմունք կիջնեն հոն մեծաշօինդ ազմուկներով և սպանալիքներով՝ մտքեր պղտորելու և մոլորեցնելու համար, ուրիշներ՝ լուսնամբ, դորձին հանձնելով խոսքն անբարբառ:

Դատաստանը, ի վերջո, արդարադատ Աստուծուն է, Որուն մենք սմինք, սբախ խորերեն, խաչեն կտակված աղոթքը միայն՝ առաջիններուն համար:

(Ելու-Յորդ, «ՆՈՐ ԱՇԽԱՐՀ» շաբաթաթերթ, 1956 թ., N N 36, 37 և 38):

